ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

1. Դպրոցի առաքելությունը
2. Դպրոցի անձնագիրը
3. Դպրոցի զարգացման ծրագրի ընդհանրական սխեման
4. Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, հիմնախնդիրների սահմանում
5. Դպրոցի զարգացման ուղղությունները, ակնկալվող արդյունքները
6. Ծրագրի նպատակները և խնդիրները
7. Գործողությունները, կատարողները, ժամանակացույցը
8. Ծրագրի ֆինանսական ապահովումը
9. Դպրոցի զարգացման ծրագրի պլանավորման և իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները
10. Դպրոցի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները, վերահսկողությունը

ՆԱԽԱԲԱՆ

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:
(ՀՀ Սահմանադրություն , հոդված 38)

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից բխող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքների պահպանելուն և սերունդներին փոխանցելուն: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: ՀՀ անկախության հռչակումից հետո սկսվել են իրականացվել կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք հնարավորություն են տվել լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու զարգացման համար: ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ - ի զարգացման 2023-2028 թթ. ծրագիրը հիմքում ընկած է, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, Հանրակրթության պետական չափորոշիչը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջները և ձևաչափը՝ հաշվի առնելով մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները, սովորողների, ծնողների մոտեցումները և դպրոցում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև Արթիկ քաղաքի առանձնահատկությունները: Ծրագիրը ուղղված է դպրոցի աստիճանական զարգացման իրականացմանը՝ նախանշելով զարգացման գերակա՛յ ուղղություններն ու խնդիրները, որոնք ուղղակիորեն բխում են դպրոցի գործունեությունից: Ծրագրի առանցքային գաղափարը դպրոցի զարգացման նոր ուղիներ գտնելն է, որը պետք է ծառայի սովորողի գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեքների, սոցիալապես նշանակալից հատկությունների ներդաշնակ զարգացմանը: Դպրոցը նպատակ ունի սովորողի համար դառնալու այն տեղը, որտեղ նա իրեն լավ է զգում և հարմարավետ պայմաններ կան կենսագործունեության համար:

1. Դպրոցի առաքելությունը

Մեր օրերում կրթությունը, հատկապես մասնագիտական որակյալ կրթությունը և դաստիարակությունը, շարունակում է մնալ ՀՀ գերակայությունների շարքում՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք: Դպրոցը պետության հիմքն է: Նրա առաքելությունն ավելի մեծ է, քան կարելի է պատկերացնել առաջին հայացքից: Դպրոցի պատասխանատվությունն է, կրթել անհատ, ով ներկայացնում է ընտանիք , սերունդ, քաղաք, երկիր, պետություն: Դպրոցը պետք է լինի հենման կետ, որը կշրջի երեխայի աշխարհը դեպի լույս, դեպի ինքնաբացահայտում:

- Դպրոցի առաքելությունը ազատ, մարդասեր, ազգային արժանապատվությամբ, բազմակողմանի ներդաշնակ քաղաքացու ինքնազարգացմանը և ինքանդրսևորմանը նպատակաուղղված պայմանների ստեղծումն ու ապահովումն է:
- Կրթության բնագավառի գերխնդիրն է, կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների համապատասխան կրթություն ստանալու մատչելիությունը:
- Յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքի ապահովում:
- Ապահովել համայնքի ներգրավվածությունը՝ կրթական որակի բարելավման նպատակով, համագործակցության և փոխվստահության ակնկալիքով:
- Պատրաստել անհատ, ով համարժեք գնահատում է իրավիճակը, սեփական հնարավորությունները և պատրաստ է լուծումներ գտնել:
- Ձևավորել ինքնուրույնություն մեդիագրագետ, համարձակ երազող, սեփական տեսակետը բարձրաձայնող, քննարկելու, խոսելու և համագործակցելու պատրաստ անհատ:

- Ստեղծել սերունդ, որը իր մեջ կրում է մասնակցային մշակույթ և արժևորում յուրաքանչյուր անհատի դերը:
- Դաստիարակել հայ, ով բազմազգ մոլորակում գիտակցի իր ազգային յուրահատկությունը, մշակույթի բացառիկությունը և գիտակցի իր՝ պահպանողի և փոխանցողի դերը: Ձևավորել անհատականություն, ով կգիտակցի հայրենիքի և պետականության արժեքը:

2. ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հաստատության անվանումը- ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի N4 հիմնական դպրոց»ՊՈԱԿ Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է, ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արթիկի տարածքային բաժնի կողմից Վկայական N 15.210.00444

Հաստատության հասցեն- ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Արթիկ , Հակոբյան 8

Հաստատության ինտերնետային կայքի հասցեն – Artik4@schools.am

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ-ի հուլիսի 16 N1053 Ա Ք հրամաններով տրված լիցենզիաների համաձայն դպրոցը իրականացնում է հետևյալ կրթական ծրագրերը:

1.**Տարրական ընդհանուր** - սահմանային թիվ 200, լիցենզիա Ա N0908, առկա սովորող՝ 100:

2.**Հիմնական ընդհանուր** - սահմանային թիվ 400, լիցենզիա Ա N0903, առկա սովորող՝ 101:

Դպրոցն ունի 600 աշակերտ-տեղ հզորություն: Ուսումնական պարապմունքներն անցկացվում են միահերթ, 5-օրյա աշխատանքային շաբաթով: ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դպրոցական շենքը հիմնադրվել է 1961 թվականին: Դպրոցական շենքը տիպային է, բաղկացած երեք մասնաշենքերից, օգտագործվում է ամբողջությամբ: Դպրոցն ունի մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ, բացօթյա մարզադաշտ, նկուղ: Հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով, շուրջօրյա ջրամատակարարմամբ: Դպրոցի շենքը 2020 թվականին վերանորոգվել է, « Հայ կրթական հիմնարկության» կողմից: Դպրոցում առկա են բավարար քանակությամբ դասասենյակներ, համակարգչային կաբինետ, ԱՐՄԱՏ լաբորատորիա, գրադարան, ճաշարան, 12 սանհանգույց:

2022-2023 ուս.տարվա հունվարի 1-ի դրությամբ դպրոցում՝

- սովորողների ընդհանուր թիվը կազմում է 201
- դասարանների թիվը՝ 10
- սովորողների թիվը տարրական օղակում՝ 100
- սովորողների թիվը միջին օղակում՝ 101
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողներ՝ 4
- վարչական աշխատողների թիվ՝ 3
- ուսուցիչների ընդհանուր թիվը՝ 21
- մանկավարժական աշխատողների թիվը՝ 3
- դպրոցում գործող առարկայական մեթոդական միավորումների թիվը՝ 4
- Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի թիվը՝ 9

Դպրոցում 2010 թվականից մեկնարկել է ՄԱԿ-ի ՊԶԾ կողմից կազմակերպած «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը, որը հնարավորություն է տալիս դպրոցի տարրական դասարանների աշակերտներին ապահովել առողջ, տաք սնունդով, հաղթահարել աղքատությունը, բարձրացնել դպրոցականների հաճախելիությունը: 2018 թվականի սեպտեմբերից «Դպրոցական սնունդ» ծրագիրը իրականացվում է պետբյուջի ֆինանսավորմամբ:

3. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

4.ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Իրավիճակի վերլուծությունը իրականացվել է ըստ հետևյալ ոլորտների

1.
- Դպրոցի շենքային պայմաններ
- Նյութատեխնիկական բազա

- Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

3
- Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը, դրանց վարումը

- Կառավարման և խորհրդակցական մարմինները

- Աշակերտական համակազմը

6
- Մանկավարժական համակազմը

- Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

8
- Ուսումնական միջավայրը

- Կրթության որակը

- Տեխնոլոգիաները և նորարարությունները

4.1 Դպրոցի շենքային պայմաններ, նյութատեխնիկական բազա

Դպրոցը տիպային կառույց է, ունի մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ, նկուղ: Դպրոցի շենքային պայմանները թե ամռանը, թե ձմռանը նպաստավոր են կրթական գործընթաց իրականացնելու համար: Հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով, շուրջօրյա ջրամատակարարմամբ: Դպրոցի շենքը վերանորոգված է, պատուհանները և դռները փոխված, հատակը սալիկապատված և լամինատապատ: Դպրոցում գործում է խոհանոց և ճաշարան: Ուսումնական պրոցեսը կազմակերպվում է մեկ հերթով: Շենքի որոշ հատվածներ, որոնք չեն վերանորոգվել 2020 թվականին, ունեն կոսմետիկ վերանորոգման կարիք: Դպրոցի տանիքը վերանորոգված է: Չնայած դպրոցում իրականացվում է ներառական կրթություն, սակայն չկան համապատասխան հարմարեցումներ, հարմարեցված սանհանգույցներ ԿԱՊԿՈՒ սովորողների համար: Դպրոցի նյութատեխնիկական բազան չի համապատասխանում ժամանակի պահանջներին: Չկան նոր սարքավորումներով և նյութերով հագեցած լաբորատորիաներ, առարկայական կաբինետներ: Համակարգչային սենյակն առկա է, բայց ապահովված չէ ժամանակակից տեխնիկական միջոցներով՝ համակարգիչներ, էլեկտրոնային գրատախտակ, տպիչ սարքեր, պրոյեկտոր և այլն: Դպրոցում առկա է ԱՐՄԱՏ լաբորատորիա, 8 համակարգիչ, բազմաֆունկցիոնալ 4 սարք, 1 սկաներ, 1 պրոյեկտոր: Դպրոցն ունի նորակառույց մարզադահլիճ, որը համապատասխանում է միջազգային ստանդարտներին:

4.2 Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցավարության մյուս կարևոր ուղղությունը նրա բյուջետային հնարավորություններն են: Դպրոցը հիմնական և հաճախ միակ ֆինանսավորումը ստանում է պետական բյուջեից: Չափազանց կարևոր է ճիշտ պլանավորումը և խնայողությունները, որոնց արդյունքում հնարավոր է որոշակի տնտեսումներ, որոնք կուղղվեն այլ առաջնային հարցերի լուծմանը: Դպրոցի բյուջեի ծախսերն ունեն հետևյալ ուղղությունները:



Ոլորտի խնդիրները կարգավորելու նպատակով անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել դպրոցի բյուջետային հատկացումները ավելացնելու և այլ միջոցներ հայթայթելու ուղղությամբ, դպրոցի բյուջեում ֆինանսական մուտքերը և դրանց փոփոխությունները կանխատեսելու, նախահաշիվ կազմելու, ֆինանսական միջոցները նախահաշվին համապատասխան ծախսելու, հաշվետվություններ կազմելու համար: Դպրոցի բյուջեն համալրվում է վճարովի խմբակներից ստացված և տարածքի վարձակալությունից առաջացած միջոցներից: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել նաև տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը դպրոցում ավելացնելու ուղղությամբ:

4.3 Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը և դրանց վարումը

Ուսումնական հաստատությունը պետք է ունենա նորմատիվ և իրավական համակարգի զարգացման հնարավորություն, իր գործունեության համար անհրաժեշտ իրավական փաստաթղթերի ցանկը և ցանկում նշված բոլոր փաստաթղթերը: Ցանկում նշված փաստաթղթերի օրինակելի տարբերակների հիման վրա պետք է կազմված և սահմանված կարգով հաստատված լինեն իր կառուցվածքին հատուկ փաստաթղթերը: Ուսումնական հաստատությունում պետք է առկա լինեն պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը, և դրանք պետք է վարվեն կարգերի պահանջներին համապատասխան: Այժմ փաստաթղթերի թղթային ձևաչափից աստիճանաբար անցում է կատարվում էլեկտրոնայինի: Այս աշխատանքին մասնակցելու հնարավորություն պետք է ունենան հաստատության բոլոր աշխատակիցները: Դպրոցի կանոնադրությունը, ներքին կարգապահական կանոնները պետք է հասանելի լինեն աշխատակիցներին, խորհրդակցական մարմիններին, կոլեգիալ կառավարման մարմիններին: Իրավունքների ու պարտականությունների իմացությունը օրինակելի աշխատանքի երաշխիքն է:

4.4 Կառավարման և խորհրդակցական մարմինները

«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրության համաձայն հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ: Շատ կարևոր է, որ խորհուրդներն ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները: Այն դեպքում, երբ խորհրդակցական մարմինները գործում են ձևական, չեն կատարում կամ մասամբ են կատարում իրենց պարտականությունները, դպրոցում ուսումնադաստիարակչական, կառավարման և ղեկավարման գործընթացներն էականորեն տուժում են: Դպրոցի տնօրենը պետք է կարողանա գնահատել և ժամանակին միջոցներ ձեռնարկել խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ձևական գործընթացները բացառելու ուղղությամբ:


ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌ.
ՀԻՄՆԱԴԻՐ
ԿՈԼԵԳԻԱԼ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
ԳՈՐԾԱԴԻՐ
ՏՆՕՐԵՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐ
ԴՊՐՈՑ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ
ՄԱՍՆԱԽՄԲԵՐ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՈՒՐԴ
ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ
ԾՆՈՂԱԿԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ

4.5 Աշակերտական համակազմը

«Արթիկի N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում ուսումնառում են 201 աշակերտ, ուսուցիչների թիվը 21: Ուսուցիչ աշակերտ թվային հարաբերակցությունը կազմում է 10:1: Դպրոցի տնօրենը պարտավոր է տվյալ տարածքում բնակվող երեխաներին՝ այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ծնողի կողմից դիմում ներկայացնելու դեպքում ընդունել դպրոց՝ ապահովելով օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան պայմաններ:Դպրոց ընդունելության ժամանակ սովորողի գիտելիքների ստուգում չի թույլատրվում: Աշակերտների ընդունելությունը կատարելուց հետո կոմպլեկտավորում են դասարանները, որտեղ սովորողները տարբերվում են ըստ կրթական կարիքների, ընդունակությունների, կրթության նկատմամբ ունեցած վերաբերմունքի և կրթական պահանջների: Աշակերտները մտավոր, սոցիալական և հուզական անհատականություններ են: Որպեսզի հասկանանք, թե ովքեր են մեր աշակերտները, պետք է հաշվի առնենք.



Դպրոցի նպատակներից են՝ զարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները սովորողների նախնական գիտելիքները որոշելու, սովորողների տարիքային հոգեբանությունը ճանաչելու, նրանց հետ արդյունավետ աշխատելու համար, դպրոցում ներդնել հոգեբանական ծառայություն՝ սովորողներին և ուսուցիչներին անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու, նրանց օգնելու և դասարանում առաջացող խնդիրների լուծմանն աջակցելու համար: Կարևորում եմ նաև մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ՝

- նախասիրությունների բացահայտմանն ուղղված թեստեր
- մասնագիտությունների և մարդու բնույթի համապատասխանությունը ախտորոշող թեստեր
- մասնագիտությունների վերաբերյալ ֆիլմերի դիտում
- ճանաչողական այցեր, հանդիպումներ
- աշխատաշուկայի ներկայացում,վերլուծություն

2023թ

- 201ԱՇԱԿԵՐՏ

2023թ

- 250ԱՇԱԿԵՐՏ

Նախնական գիտելիքներ

Աշակերտները գալիս են կրթություն ստանալու՝ ունենալով նախնական գիտելիքներ, ունակություններ, պատկերացումներ և կարծիքներ, որոնք զգալիորեն ձևավորվել են միջավայրի ազդեցությամբ: Սա ազդում է նրանց՝ դժվարությունները հաղթահարելու և նոր գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների վրա: Նոր գիտելիքները կառուցվում են առկա գիտելիքների հիման վրա: Դպրոցը պետք է օգնի, որ աշակերտները կարողանան զարգացնել իրենց գիտելիքները և կարողանան դրանք արդյունավետ կիրառել:

Մտավոր զարգացում

Յուրաքանչյուր երեխա ունի ունակություններ և տաղանդներ: Երեխաները, բնականաբար, հետաքրքրասեր են և լի սովորելու ցանկությամբ: Եվ որպեսզի նրանք կարողանան ցույց տալ իրենց տաղանդները, նրանց պետք է խնդացի առաջնորդություն մեծերի կողմից, ուսուցչից: Մտավոր զարգացում տեղի է ունենում բազմակողմանի փոխգործակցության արդյունքում՝ այլ մարդկանց հետ հաղորդակցության մեջ, գործունեության մեջ և, մասնավորապես, կրթական գործունեության մեջ: Նորի պասիվ ընկալումը և ձուլումը չի կարող հիմնավոր գիտելիքների հիմք դառնալ: Հետևաբար, ուսուցչի խնդիրն է, սովորողների մտավոր կարողությունների զարգացումը, նրանց ներգրավվածությունը ակտիվ աշխատանքի մեջ:

Մշակութային դաստիարակություն

Մշակույթը այն հիմնական գործոնն է, որն օգնում է մարդկանց հաղորդակցվել և կարգավորում է հաղորդակցության տարբերությունները՝ սկսած առօրյա զրույցներից մինչև համաշխարհային տնտեսության զարգացում: Մշակութային դաստիարակության նպատակներն են՝ սովորողների մոտ ձևավորել ազգային մշակութային մտածելակերպ, գնահատել սեփական մշակութային արժեքները, հաղորդակից դառնալ համաշխարհային մշակութային ժառանգությանը, նոր սերնդին նախապատրաստել համընդհանրացման գործընթացներին: Այն ուսուցանում է փոխըմբռնում և հանդուրժողականություն: Առանց մշակույթի մարդկությունը գոյություն չի ունենա: Մշակույթը նաև խոսում է կյանքի որակի մասին: Այն մարդկանց միջև ստեղծում է վստահություն և համերաշխության զգացում:

Տարբեր մշակույթով դաստիարակված սովորողներ շփվում և հաղորդակցվում են նույն հարկի տակ: Պետք է կարողանալ նկատել այն երևույթները , որոնք կխոչընդոտեն սովորելու, սովորեցնելու և համագործակցելու գործընթացներին, դիմակայել մարտահրավերներին և սպառնալիքներին:

Զարգացվածություն, զարգանալու հույսեր

Աշակերտներն ունեն իրենց առանձնահատկությունները, որոնցով պայմանավորված ուսուցման գործընթացը տարբեր չափով կարող է արդյունավետ լինել: Որպես տարբեր մշակույթի կրողներ, աշակերտները տարբերվում են նաև սովորույթներով և սպասելիքներով, քանզի տարբեր կերպ են ընկալում, պատկերացնում, մեկնաբանում երևույթներն ու իրավիճակները:

Աշակերտի կարիքը

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Կրթություն բոլորի համար, որտեղ կարող են սովորել և՛ սովորական, և՛ օժտված , և՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները: Համընդհանուր ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը: Կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու նպատակով երեխան կարող է ներկայացվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման՝ ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա կամ երեխայի կրթության վայր հանդիսացող ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի դիմումի հիման վրա, եթե դիմումին կցված է ծնողի ստորագրած համաձայնագիրը: Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի մանկավարժա-հոգեբանական գնահատումը կազմակերպվում է ծնողի (կամ նրա այլ օրինական ներկայացուցչի) մասնակցությամբ: Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի գնահատումը իրականացվում է երեխայի կենսագործունեության բնական միջավայրում (ընտանիք, ուսումնական հաստատություն և երեխայի շփման այլ միջավայրում):

4.6 Մանկավարժական համակազմը

Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է: Մենք պետք է կարողանանք գնահատել մեր մանկավարժական պոտենցիալը, ինչի համար պետք է, ունենանք գնահատման չափանիշներ: Մենք կարող ենք ուսուցչին գնահատել՝ ըստ նրա կրթության և փորձառության, ըստ նրա՝ ուսուցման գործընթացում ունեցած հաջողությունների, ըստ դպրոցի զարգացման գործընթացում նրա ունեցած ներդրման: Կրթության որակի բարելավումը նախ և առաջ ենթադրում է, որակյալ ուսուցիչների առկայություն: Կրթության որակի բարձացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է, ուսուցչին: Դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավումը համարում ենք դպրոցի ռազմավարություններից մեկը:

ա. Ուսումնասիրել, ընդհանարացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկաշխատանքում:

բ.Որակավորման տարակարգ չունեցող, սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման:

գ.Կազմակերպել մասնագիտական և մանկավարժամեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ:

դ. Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական մեթոդական ընթերցումներ

ե.Նպաստել ուսուցիչների որակավորման բարձացմանը:

զ. Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ձեռք բերել նոր համակարգիչներ, էլեկտրոնային գրատախտակ:

Հասնել նրան, որ յուրաքանչյուր ուսուցիչ տիրապետի համակարգչային ծրագրերին:

Այդ նպատակով կազմակերպել դասընթացներ: Նախատեսում եմ աջակցել մանկավարժներին մշակել և տպագրել իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութերը և ստեղծել համապատասխան պայմաններ փորձարարական հետազոտական նախագծային աշխատանքներն իրականացնելու համար:

4.7 Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Համագործակցությունն ու ակտիվ մասնակցությունը համայնքի կյանքին ժողովրդավարական դպրոցի կարևորագույն չափանիշներից են: Համագործակցությունը ուղղված է նրան, թե ինչպես է դպրոցն արձագանքում հասարակությանը, որին պետք է ծառայի, աշակերտներին, որոնց համար գոյություն ունի, ինչպես նաև ծնողներին, որոնք համարվում են ուսումնական գործընթացի մասնակիցներ: Համագործակցությունը կապված է նաև այն բանի հետ, թե ինչքանով է դպրոցը ակտիվ և բարյացակամ գործընկեր այլ կազմակերպությունների հետ: Ստորև ներկայացված գծապատկերը արտահայտում է այդ համագործակցության տեսլականը:



4.8 Ուսումնական միջավայր

Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է: Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Այն պայմանավորված է նշված բոլոր ուղղությունների առկայությամբ և փոխկապակցվածությամբ: Կրթության կազմակերպման համար առանցքային և հատկանշական դեր ունի ուսումնական միջավայրը, որը դառնում է կազմակերպիչ, ազդու, թելադրող ոչ միայն սովորողների ուսումնական գործընթացի մեջ ներգրավելու համար, այլև բոլորի, ընդհուպ դասավանդող ուսուցիչների: Ուսումնական միջավայրը պետք է լինի ներդաշնակ, որտեղ սովորողն ազատ է, պաշտպանված, պատրաստ է աշխատելու, ստեղծագործելու, աշխատելու: Միջավայր, որը առավելագույնս նպաստում է սովորողների ակտիվության բարձրացմանը: Դպրոցի խնդիրն է ապահովել բարենպաստ, խնամված, անվտանգ ուսումնական միջավայր յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:

4.9 Կրթության որակը

Որակյալ կրթությունը միտված է ապագային և ենթադրում է ոչ միայն նախկինում առկա գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլև նոր գիտելիքների ստեղծում: Կրթությունը այնպիսի մի ոլորտ է, որը չի շրջանցում հասարակության որևէ անդամի, և այդ անդամներից յուրաքանչյուրը ոչ միայն փորձում է առավելագույնս ստանալ այդ գործընթացից, այլ նաև ունենալ սեփական մոտեցումները լսելի դարձնելու մեխանիզմներ՝ այդ գործընթացների վրա ազդելու տեսանկյունից: Հանրակրթության ոլորտում հիմնական գերակայությունը որակի բարձրացումն է, որի նախապայմանն է ուսումնական հաստատությունների կողմից կրթական առաքելության գիտակցումը: Կրթության որակը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ:

Դրանցից առաջնահերթն ուսումնառության արդյունքներն են, որոնք պահանջված են սովորողների կողմից, և ապահովում են շրջանավարտների պատրաստվածությունը՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության:

Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակում նշվում են հետևյալ հիմնական կետերը.

1) կրթական չափորոշիչների և ծրագրերի բարելավում,

2) հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, ապահով և անվտանգ միջավայրի ստեղծում,

3) բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական անձնակազմի ապահովում, որոնք տիրապետում և կիրառում են ժամանակակից դասավանդման մեթոդներին և ՏՀՏ-ներին,

4) կրթական պաշարների և ուսումնական գրականության որակական բարելավում:

Մեր առջև խնդիր ենք դնում բարձրացնելու աշխատանքային կարգապահությունը և ուսուցման որակը:

4.10 Նորություններ և տեխնոլոգիաներ

Ուսումնական տեխնոլոգիաների բազմազանության պայմաններում ուսուցչի գործառույթը որոշիչ դեր է կատարում: Որքան ժամանակակից տեխնոլոգիաները ներթափանցում են ուսումնադաստիարակչական գործընթացի մեջ, այնքան ուսուցիչը ստանձնում է խորհրդատուի, ուղղորդողի և դաստիարակողի դեր: Դրա համար նրանցից պահանջվում է հատուկ հոգեբանամանկավարժական պատրաստվածություն, քանի որ ուսուցչի մասնագիտական գործունեության մեջ իրականացվում են ոչ միայն մասնագիտական առարկաների իմացություն, այլ նաև մանկավարժության ու հոգեբանության, տեխնիկայի ուսուցման և դաստիարակության ժամանակակից գիտելիքներ: Հենց այդ բազայի վրա է ձևավորվում մանկավարժական նորարարություններ ընդունելու պատրաստակամությունը: Մանկավարժական գործընթացի մեջ նորարարությունն նշանակում է նորույթ մտցնել ուսուցչի և աշակերտների համատեղ գործունեության

կազմակերպման, ուսումնադաստիարակչական աշխատանքների նպատակի, բովանդակության, ձևերի և մեթոդների մեջ: Մանկավարժական նորարարությունը բարձրացնում է ոչ միայն ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը, այլև ուսուցչին զինում է մանկավարժական վարպետությամբ և նրան կրկին անգամ ստեղծագործելու հնարավորություն է տալիս: Տեղեկատվությունը կրթական համակարգի բարեփոխման ամենակարևոր մեխանիզմն է, որն ուղղված է կրթության որակի, մատչելիության արդյունավետության բարձրացմանը: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը կրթական գործընթացում ժամանակակից դպրոցական կրթության հրատապ խնդիր է: Պետք է հասնել նրան,որ դպրոցական ցանկացած առարկայի յուրաքանչյուր ուսուցիչ կարողանա պատրաստել և անցկացնել դաս՝ օգտագործելով ՏՀՏ: Այստեղից էլ բխում են ՏՀՏ-ների օգտագործման նպատակները՝

- բարձրացնել սովորելու մոտիվացիան /շարժառիթը/,
- մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը,
- նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը,
- բարելավել դասի անցկացման մեթոդները
- ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները,
- պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը
- օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց,

արագ և որակյալ պատրաստվել դասին:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

1

- Ժամանակին համընթաց և մրցունակ կրթության ապահովում

- Պակաս աշխատանք ինքնակրթության ուղղությամբ

3

- Ոչ գրավիչ ուսումնական միջավայր, գույքի նորացման անհրաժեշտություն

- Տեխնոլոգիական սարքերի կարիք աղքատ ուսումնանյութական բազա

- Նոր ժամանակի սովորողի պահանջմունքների բավարարում

6

- Տարբեր կրթական և տեղեկատվական հարթակներում ակտիվության, նորզարավվածության պակաս

- Կրթության բնագավառում ներկայացվածության, համագործակցության առաջարկների ներկայացում

8

- Ներառականության նկատմամբ թերահավատություն, փորձի և պակաս

ԴՊՐՈՑԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՆԱԿԱՆ ԱԿՏԵՐ

- Դպրոցում առկա են պարտադիր գործածության ենթակա փաստաթղթերը, դրանք լրացվում են ըստ կարգի՝ ելնելով դպրոցի առանձնահատկություններից
- Խորհրդակցական մարմինները արդյունավետ համագործակցում են
- Տիրապետում են իրենց պատկանող փաստաթղթերի բովանդակությանը

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

- Աշակերտները հետաքրքրված են SZS- ներով
- Պատասխանատվությամբ են կատարում իրենց պարտականությունները
- Արդյունավետ համագործակցում են միմյանց և այլ դպրոցի աշակերտների հետ

ՈՒՍՈՒՑԻՉ

- Ուսուցիչները աշխատանքում ներդնում են իրենց ջանքերն ու փորձառությունը
- Պատրաստակամ ու պատրաստական են նորարարությունները ընդունելու, նախաձեռնող են

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

- Ուսումնական գործընթացի նպատակները բխում են հանրակրթական պետական չափորոշչից
- Ուսուցումը համապատասխանում է աշակերտների կարիքներին
- Կազմակերպական գործողությունները կատարվում են ըստ պլանի

ՀԱՍԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

- Ծավալում է փոխշահավետ համագործակցություն համայնքի հետ
- Հնարավորության դեպքում կարող է ծառայություններ մատուցել համայնքին,
- Ակտիվ է մշակույթային կյանքը

ԴՊՐՈՑԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄ

ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	• Դպրոցն ունի կոսմետիկ վերանորոգման խիստ կարիք • Չկան հարմարեցումներ ԿԱՊԿՈՒ աշակերտների համար • Դպրոցն ունի նոր գույքի կարիք
ՆՅՈՒԹԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	• Լաբորատորիաները չունեն ժամանակակից կահավորում
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ	• առարկայական կաբինետների կահավորումը թերի է, հարմարեցումներ չկան
ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	• Նորարարական նյութատեխնիական միջոցների կարիք կա

5. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ուղղությունները հնգամյա ռազմավարությունն է, որը հիմք է դպրոցի առկա իրավիճակից բխող նպատակների և խնդիրների սահմանման համար, ուստի այն ներառում է մի քանի ուղղություն, որոնցից են հանրակրթության օրենսդրությամբ հանրակրթական պետական ծրագրերով դպրոցի համար սահմանված նպատակների և խնդիրների իրականացումը, հանրակրթական այլընտրանքային (միջազգային, փորձարարական, հեղինակային) ծրագրերով դպրոցի կողմից իրականացվող առանձին

բովանդակային, կրթական տեխնոլոգիաների, ուսուցման կազմակերպման ոչ ավանդական ձևերի ուղղությամբ իրականացվող նորարարական ծրագրավորված ուղղությունները: Դպրոցի զարգացման ուղղությունների առավելագույն մասը պատկանում է հանրակրթական պետական չափորոշիչով ու ծրագրերով սահմանված նպատակների ու խնդիրների իրականացմանը: Հաջորդ կարևոր ուղղությունը նորարարական ծրագրեր իրականացնելն է, որտեղ թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները ձեռք են բերում նոր գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, դիրքորոշում և արժեքներ: Ինչպես նաև մանկավարժական համակազմի որակական բարելավում՝

1. բարձրացնել մեթոդմիավորումների աշխատանքի որակը,
2. խրախուսել ժամանակի հետ համընթաց քայլող, ինքնակրթությամբ զբաղվող ուսուցիչներին,
3. ուսուցիչներին մասնակից դարձնել ՏՀՏ գործիքների վերապատրաստման գործընթացներին,
4. բարձրացնել մանկավարժական համակազմի գիտական, մանկավարժական և մեթոդական պատրաստվածությունը,
5. օգնել մանկավարժներին ստեղծել և տպագրել հոդվածներ, հրատարակել նոր նյութեր, ստեղծել մեթոդական գրականություն,մասնակցել կամավոր ատեստավորմանը
6. Հաղորդակից դարձնել արդի աշխարհի կրթական բարեփոխումներին:

Որպես ՀՀ Շիրակի մարզի « Արթիկի N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի հավակնորդ, սույն զարգացման ծրագրով նախատեսված հնգամյակում 2023-2028թթ. ակնկալում եմ՝

1. վերանորոգված և նյութատեխնիկական բազայով հագեցած դպրոցի ապահովում,
2.որակյալ և մրցունակ կրթության ապահովում, դպրոցի և ուսուցչի հեղինակության բարձրացում,
3. սովորողների կողմից մասնագիտական կողմնորոշման և նախամասնագիտական կրթության բարձր մակարդակի ապահովում,
4. աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, ուսուցիչ-ծնող, աշակերտ-համայնք, ուսուցիչ-համայնք հարաբերությունների վերահմաստավորում և ամրապնդում,
5. ՏՀՏ միջոցների լիարժեք կիրառում դպրոցում և դասապրոցեսում,
6.ներառականության հաղթահարված խնդիրներ,
7.արտադասարանական խմբակների ձևավորում և սովորողների առավելագույն ընդգրկում,

8.սովորողների մոտ ձեռնարկատիրական գործունեության զարգացում,

9.ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան խորհրդակցական մարմինների գործունեություն:

6. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նպատակ

Կրթության որակի բարձրացում

Դաստիարակության բարձր արդյունքների արձանագրում
Ներառականության կատարելագործում

Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի ապահովում

Ուսումնանյութական բազայի թարմացում

Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացում

Որակյալ կրթության շարունակական ապահովում

Նորարարությունների իրականացում և խրախուսում

Խնդիրներ

Կրթության որակի բարելավում

1. Ժամանակին արձագանքել կրթության բնագավառի փոփոխություններին և նորություններին
2. Կարևորել մասնագիտական շարունակական կատարելագործումը
3. Աշակերտակենտրոն դասը համարել ժամանակի պահանջ
4. Կիրառել գնահատման տարբեր ձևեր
5. Մոտիվացնել աշակերտներին և ուսուցիչներին մասնակցել տարբեր մրցույթների
6. Հնարավորինս կիրառել ՏՀՏ-ներ
7. Խրախուսել ուսուցիչներին, աշակերտներին, ծնողներին
8. Ճիշտ աշխատանք կազմակերպել ԿԱՊԿՈՒ և օժտված աշակերտների հետ
9. Անվճար խմբակների գործունեության ծավալում

Դաստիարակության բարձր արդյունքների արձանագրում
Ներառականության կատարելագործում

1. Աշակերտների մեջ ձևավորել շարունակական կրթության հնարավորությունն ապահովող անձնային որակներ:
2. Ծնողներին ակտիվորեն ընդգրկել դպրոցի դաստիարակչական գործընթացներում:
3. Հետևել, որ դաստիարակչական աշխատանքները հիմնվեն հստակ նախագծված դասդեկական պլանների վրա:
4. Վերլուծել դպրոցի դաստիարակչական միջավայրը և բացահայտելով առկա խնդիրները և բացթողումները՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ,
5. Քայլեր ձեռնարկել աշակերտների, ինչպես նաև աշակերտների և ուսուցիչների միջև բավարար համագործակցության, հաղորդակցության համար դրական միջավայր ստեղծելու ուղղությամբ:

6. Դասղեկական ժամերի և արտադասարանական միջոցառումների միջոցով իրականացնել բարոյական և հայրենասիրական դաստիարակություն
7. Սովորողներին հանդուրժողականության ոգով դաստիարակելու համար հնարավորություն ընձեռել ազատ՝ քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու և իրենց առջև ծառացած խնդիրների լուծման գործընթացին ակտիվ մասնակցելու ժամանակ դրսևորել հանդուրժողականություն թե՛ հաղթանակի, թե՛ պարտության դեպքում:
8. Ձևավորել հոգատար վերաբերմունք համայնքի, շրջակա միջավայրի նկատմամբ
9. Դիտարկել բոլոր աշակերտներին, բացահայտել կարիքները, տալ գնահատված կարիքներին համապատասխան հարմարեցումները
10. Կազմակերպել ԱՈԻՊ-ներով և կանխարգելիչ պլաններով բավարար աշխատանք
11. Ստեղծել բարձրակարգ ներառական միջավայր
12. Համագործակցել աջակցող ծառայությունների հետ

Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի ապահովում

1. Դպրոցի անվտանգության ապահովում՝ ըստ հարմարեցված միջավայրի, աղետների ռիսկերի կառավարմանն ու մեղմացմանն ուղղված կրթության:
2. Դպրոցի և դպրոցամերձ տարածքի մաքրության, խնամքի ապահովում:
3. Դպրոցում ուսումնական գույքի, ժամանակակից սարքավորումների արդիականացում:

Շենքային պայմանների բարելավում և ուսումնանյութական բազայի թարմացում

1. Դպրոցի վերազինման նպատակով պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում
2. Բարեգործական և դոնոր կազմակերպություններից աջակցության նպատակով ծրագրերի ներկայացում
3. Դրամաշնորհային մրցույթների մասնակցություն

Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնում Նորարարությունների իրականացում և խրախուսում

1. Կարողանալ ձեռք բերել համակարգիչներ, տեխնիկական սարքավորումներ
2. Մեծացնել դրանց կիրառության ծավալները
3. Ուսուցիչներին և աշակերտներին ծանոթացնել տարբեր նորարարական ծրագրերի, օգտագործել նրանց մտավոր ներուժը, մոտիվացնել:

7.ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԱՏԱՐՈՂՆԵՐ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
1	Կառավարման խորհրդի անդամների հետ քննարկել լրացուցիչ ֆինանսական միջոցներ հայթայթելու խնդիրը:	Խորհուրդ Տնօրեն	Ուստարվա սկիզբ
2	Դպրոցի խնայված միջոցներն ու ֆինանսական լրացուցիչ միջոցները՝ առկայության դեպքում, խորհրդի որոշմամբ ուղղել նյութատեխնիկական բազայի հարստացմանը:	Խորհուրդ Տնօրեն	Ուստարվա սկիզբ
3	Սերտ կապեր ստեղծել դպրոցի խորհրդակցական մարմինների միջև և նրանց ընդգրկել ուսումնադաստիարակչական գործընթացում:	Խորհրդակցական մարմիններ	Մշտապես
4	Առարկայական մեթոդմիավորումներում քննարկել դասավանման ինտերակտիվ մեթոդների կիրառման կարողությունների հարցը, բացահայտել կարիքները:	Տնօրեն, փոխտնօրեն, առարկայական մասնախմբեր	Պարբերա-բար
5	Կազմակերպել դասալսումներ, օրինակելի դասեր, արդյունքները քննարկել մեթոդմիավորումների նիստերում	Տնօրեն,փոխտնօրեններ, մ/մնախագահներ ուսուցիչներ	Մշտապես

6	Համակարգչային բավարար գրագիտություն չունեցող ուսուցիչների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ	Օպերատոր, կամավորուսուցիչներ	Պարբերաբար
7	Սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ շարունակել աշխատանքները՝ դասընթացներ, հնարավորությունների բացահայտում, խորհրդատվություններ,	Դասղեկներ, հրավիրված մասնագետներ	Պարբերաբար
8	Միջոցառումների, մրցույթների կազմակերպում, մասնակցություն համայնքային կյանքին, հասարակական աշխատանքներին:	Ուսումնական գործընթացի մասնակիցներ	Մշտապես
9	Մեծ ուշադրություն դարձնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների կրթության, դաստիարակության ու շրջապատում ինտեգրման գործին:	Ուսումնական գործընթացի մասնակիցներ	Մշտապես
9	Դպրոցի խորհրդակցական բոլոր մարմիններին ընդգրկել դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում, ակտիվացնել նրանց գործունեությունը	Դասղեկներ, հրավիրված մասնագետներ	Մշտապես

Իրականացվող գործողությունների շարքը, կատարողները, ժամկետները կարող են փոփոխվել: Դրանք առավել մանրամասնորեն և ամբողջական ծավալով ու բովանդակությամբ կարտացոլվեն տարեկան աշխատանքային պլանում:

8. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Դպրոցի զարգացման ծրագիրը ենթադրում է որոշակի ֆինանսական ծախսեր: Դպրոցի ֆինանսավորումը հիմնականում բավականացնում է աշխատավարձի, հարկերի, կոմունալ, գրենական, տնտեսական ծախսերի վճարմանը: Պետական բյուջեից ստացված եկամուտը բավարար չէ դպրոցում առկա խնդիրները լուծելու համար: Անհրաժեշտ է հայթայթել լրացուցիչ ֆինանսական միջոցներ: Այդ առումով պետք է ակտիվացնել շահագրգիռ կողմերի ուշադրությունը դպրոցի վրա: Այս առումով կարևորում եմ այդ միջոցները հայթայթել ՀՀ օրենսդրությամբ չարգելված և կանոնադրությանը չհակասող գործունեությունից: Ուստի անհրաժեշտ է ճիշտ կողմնորոշվել և կատարել իրատեսական պլանավորում, պետք է հստակ պատկերացնել իրականացման մեխանիզմները և հնարավորությունները: Պետք է կարողանալ նաև տնտեսել և այդ միջոցներն ուղղել որոշակի խնդրի լուծմանը: Կառավարման խորհրդի, ծնողական խորհրդի հնարավորություններն օգտագործել լրացուցիչ ֆինանսական միջոցներ հայթայթելու ուղղությամբ: Դիմել բարեգործական կազմակերպություններին և հիմնադրամներին աջակցության առաջարկով:

8.1 ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ և ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի պլանավորման և իրականացման ռիսկերը՝

1.Դպրոցի աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակի խոչընդոտներ:

2.Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ:

3. Դպրոցի նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն:

4. Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն:

5. Ծնողների և աշակերտների մոտ ուսման նկատմամբ ունեցած անտարբերությունը:

6. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների կրթության ու դաստիարակության անհարմարավետ պայմանները:

8.2 ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մանկավարժներին ընդգրկել վերապատրաստման դասընթացներին մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:

2.Լրացուցիչ ֆինանսական միջոցների ձեռքբերում (գտնել հովանավորներ, բարերարներ):

3.Ֆինանսական միջոցների ճիշտ պլանավորում, լրացուցիչ միջոցների հայթայթում:

4.Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը:

5.Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը:

6. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների կրթության ու դաստիարակության հարմարավետ պայմանների ստեղծումը:

8. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՐԸ

Դպրոցի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար կարևորում եմ դպրոցի ներքին և արտաքին գնահատումը, որի մեխանիզմը նախատեսված է ՀՀ <<Հանրակրթության մասին> օրենքով: Ներքին և արտաքին գնահատումն անհրաժեշտ է, ուղղորդել սովորողին մատուցվող կրթական և դաստիարակչական ծառայությունների որակի բարձրացմանը:

1. Դպրոցի զարգացման ծրագիրը գնահատվում է տարեկան մեկ անգամ ներքին գնահատման արդյունքների հիման վրա:

2. Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացվում է դպրոցի տնօրենի և կառավարման խորհրդի կողմից:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

Դպրոցում կատարվող աշխատանքների կառավարման որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ստեղծել գնահատման արժեքային համակարգ, որի անմիջական աջակցողները պետք է լինեն դպրոցում կրթական գործընթացի մասնակիցները՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ, վարչական աշխատողները, կոլեգիալ կառավարման խորհուրդը, խորհրդակցական մարմինները: Այն դպրոցի կառավարումը կդարձնի ավելի թափանցիկ և արդյունավետ: Դրա համար անհրաժեշտ է զարգացնել նրանց գործունեությունը և բարձրացնել նրանց դերը:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

2023-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի: